# Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

*22.01.2018թ.-ին կնքված թիվ PD-36-01-18*

**Փոստային կապի, փոստային կապի հետ կապված**

**ուրիշանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման**

*պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին*

ք.Երևան «25-ը» հոկտեմբերի, 2018թ.

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից, և **ՀՀ Քննչական կոմիտեի դեպարտամենտը (այսուհետ՝ Հաճախորդ)՝ ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի,** մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 22.01.2018թ.-ին կնքված թիվ PD-36-01-18 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված ուրիշանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Պայմանագրի 3.3. կետով «սահմանվում է» բառից հետո **«12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն»** բառերը փոխարինել **« 16 900 000 (տասնվեց միլիոն ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն» բառերով:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 22.01.2018թ.-ին կնքված թիվ PD-36-01-18 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված ուրիշանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:

3.Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և կիրառվում է 01.09.2018թ. ծագած հարաբերությունների վրա:

4.Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող (4) օրինակից: Համաձայնագրի 3 (երեք) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

5.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

**Ընկերություն՝**

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507464
Հեռ.՝ 010/514-548

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝

------------------------- Հ.Ավագյան

**Հաճախորդ՝**

ՀՀ Քննչական Կոմիտեի Դեպարտամենտ
ք. Երևան, Սամիկոնյանց 46/5
ՀՎՀՀ/ 02631263
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ / 900011000834
Հեռ.՝ / 011/880-102

Դեպարտամենտի ղեկավար՝

------------------------- Ա. Նիկոյան

Կատարող՝ Անահիտ Մարտիրոսյան
Հեռ.՝ 514-548